МИНИСТЕРСТВО ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ И ИНФРАСТРУКТУР РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАО "ВЫСОКОВОЛЬТНЫЕ ЭЛЕКТРОСЕТИ"
ГЕНЕРАЛЬНЫЙ ДИРЕКТОР

0084 Армения, Ереван, ул. З. Андраника 1
Тел. 060 38 00 01

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION AND INFRASTRUCTURES OF THE REPUBLIC OF ARMENIA
"HIGH VOLTAGE ELECTRIC NETWORKS" CJSC
GENERAL DIRECTOR

0084 Armenia, Z. Andranik st.1, Yerevan
Tel: 060 38 00 01

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
0084, Հայաստան, Երևան, Զ. Անդրանիկի 1,
Հեռ. 060 38 00 01
Էլ. հասցե: hven@hven.am, www.hven.am

No._____

«15» սեպտեմբերի 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ

«ԱՆԱԼՈԳ ՖԻԼՄ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կարիքների համար 2023 թվականի հունիսի 13-ին Microsoft ծրագրային ապահովման տարեկան բաժանորդագրության ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-23/21» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-23/21» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել 20.06.2023թ. ժամը 17:00-ը և այդ պահի դրությամբ հայտեր են ներկայացրել «Անալոգ Ֆիլմ» ՍՊԸ-ն և «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն:

«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-23/21» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ավարտին՝ 07.07.2023թ. ժ.14:00-ին նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից «Անալոգ Ֆիլմ» ՍՊԸ-ն ճանչվել է ընտրված մասնակից, որին սահմանված կարգով, անգործության ժամկետի ավարտից հետո՝ 28.07.2023թ.-ին առաջարկվել է կնքել համապատասխան պայմանագիր: Ընկերությունը ծանուցումը ստանալուց հետո օրենսդրությամբ սահմանված 5 օրյա ժամկետում Պատվիրատուին չի ներկայացրել իր կողմից կնքած պայմանագիրը և դրան համապատասխան պայմանագրի և որակավորման ապահովումները: ՀՀ

գնումների մասին օրենսդրության պահանջների համաձայն «Անալոգ Ֆիլմ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից և գնման ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել երկրորդ տեղը զբաղեցրած մասնակից՝ «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն:

«Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի հետ ս.թ սեպտեմբերի 4-ին կնքվել է պայմանագիր, որի մասին հայտարարությունը ս.թ սեպտեմբերի 5-ին հրապարակվել է գնումների պաշտոնական տեղեկագրում:

Ստորև ներկայացնում եմ «Անալոգ Ֆիլմ» ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքն ապահովող տեղեկատվությունը.

Մասնակցի						
Անվանումը	ՀՎՀՀ /ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը /	Գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«Անալոգ Ֆիլմ» ՍՊԸ	09220806	ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 15Ա			V	Որոշման ամսաթիվը՝ 15.09.2023թ., ընթացակարգի ծածկագիրը՝ ԲԷՑ-ԳՀԾՁԲ-23/21

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը, որոշեցի.

Առաջարկել ՀՀ ֆինանսների նախարարությանը «Անալոգ Ֆիլմ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ